ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ[1]

Հրայր Փաշայան՝, Լիանա Բալայան՝՝

Բանալի բառեր՝ կոնֆլիկտի կողմեր, Ղարաբաղյան հակամարտություն, ձևախեղված բանակցություններ, հակամարտության կերպար, բանակցային գործընթաց, մասնագիտական պատրաստվածություն:

Խնդիրը. Վերջին շրջանում Ղարաբաղյան հակամարտության շուրջ ընթացող գործընթացները, մասնավորապես Հայաստանի Հանրապետության նոր իշխանությունների որդեգրած դիրքորոշումը, այն է՝ կարգավորման գործընթացի այս ձևաչափը չի կարող լուծել մի հարց, որի առանցքային մասնակիցներից մեկը ներգրավված չէ բանակցություններում, և որ Արցախի անունից կարող է խոսել Արցախի իշխանությունը[2], տարիներ շարունակ Արցախին որպես բանակցային կողմ անտրամաբանորեն մերժող Բաքվի իշխանություններին նոր խնդրի առաջ կանգնեցրին: Կարելի է ենթադրել, որ ադրբեջանական կողմը, չունենալով որևէ հիմնավոր փաստարկ Արցախին ուղղակի բանակցություններից հեռու պահելուն ուղղված ապակառուցողական դիրքորոշումն առաջ տանելու համար, հերթական անգամ դիմել է վաղուց փորձված մեթոդին: Թերևս, այս համատեքստում են տեղավորվում նաև վերջին շրջանում ադրբեջանա-ղարաբաղյան շփման գծի տարբեր հատվածներում ադրբեջանական զինուժի տեղաշարժերն ու կուտակումները, հայ-ադրբեջանական սահմանագծում անընդհատ գրանցվող լարվածությունը և ռազմական գործողությունների վերսկսման մասին հայտարարությունները: Ի թիվս այլ խնդիրների, պաշտոնական Բաքուն դրանով փորձում է ի չիք դարձնել ՀՀ իշխանությունների որդեգրած նոր մոտեցումներն ու հանրային ռեսուրսը՝ պատերազմի վերսկսման սպառնա-

---

[1] Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության № SCS 17/003 գիտական թեմայի շրջանակներում:

՝ Արցախի պետական համալսարան, ք.գ.թ., դոցենտ:

՝՝ Ստեփանակերտի թիվ 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի:

[2] http://armenpress.am/arm/news/932930.html

լիքն օգտագործելով Արցախին բանակցային գործընթացից հեռու պահելու անհիմն դիրքորոշումը պահպանելու համար:

Հաշվի առնելով Ղարաբաղյան հակամարտության շուրջ ընթացող զարգացումների արդիականությունն[1] ու այն հանգամանքը, որ հիմնախնդրի իրական կերպարը միջազգային հանրությանը, այդ թվում՝ բանակցություններում ներկայացնելը հակամարտության քաղաքական և իրավական կարգավորման առանցքային բաղադրիչն են, անհրաժեշտ ենք համարում պարզաբանել. ի՞նչ է հասկացվում *ղարաբաղյան հակամարտության կողմ հասկացության ներքո, ինչպե՞ս է ձևավորվել ներկայիս ձևախեղված բանակցային ձևաչափը, ի՞նչ պետք է անել համազգային կարևորության այս հարցում միասնական և իրավունքի տեսանկյունից հիմնավորված դիրքորոշում որդեգրելու համար:*

«Կոնֆլիկտի կողմեր» հասկացությունը մասնագիտական ուսումնասիրություններում. Անդրադառնալով «հակամարտության կողմեր» հասկացության պարզաբանմանը, պետք է ասել, որ մասնագիտական գրականության մեջ այս հարցում հստակություն և միակարծություն չկա: Ջ.Լաուն, խոսելով «կոնֆլիկտի կողմ» և «երրորդ կողմ» հասկացությունների մասին, դրանցից առաջինը սահմանում է երկրորդի համատեքստում. «Առաջին և երկրորդ կողմերն ունեն ուղղակի նպատակներ կամ ուղղակի շահեր կոնֆլիկտում կամ դրա ելքերում»: Ինչ վերաբերում է «երրորդ կողմ» հասկացության սահմանմանը, նա նշում է, որ «երրորդ» կողմը սոցիալական գիտության վերլուծության եզրույթ է, այլ ոչ թե մաթեմատիկական հասկացություն [1, էջ 254]: Այսինքն՝ Ջ.Լաուն «կոնֆլիկտի կողմ» ասելով նկատի է առնում կոնֆլիկտում ուղղակի շահեր ունեցողներին: Ի հակադրություն

[1] Հարցն արդիական է նաև ներքաղաքական դիսկուրսի տեսանկյունից: Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018թ. մայիսի 9-ին Արցախում ունեցած մամուլի ասուլիսը, մասնավորապես՝ Ղարաբաղյան հակամարտությանը վերաբերող հատվածը հիմնախնդրի շուրջ քննարկումների առիթ դարձան նաև հայ քաղաքական շրջանակներում: Մասնավորապես, ակտիվ բանավեճ ծավալվեց Նիկոլ Փաշինյանի արտահայտած այն մտքի առնչությամբ, որում նա Հայաստանի Հանրապետությունը համարել է հակամարտության կողմ: Պաշտպանության նախկին նախարար Վիգեն Սարգսյանը Ղարաբաղյան կարգավորման շուրջ վարչապետի հայտնած դիրքորոշումները, մասնավորապես՝ Հայաստանի հակամարտության կողմ լինելու արտահայտությունը վտանգավոր համարեց (Վարչապետը Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման շուրջ հայտնեց մի շարք դիրքորոշումներ, որոնք, ըստ իս, կարող են նաև վտանգավոր լինել. http://www.aravot.am/2018/05/12/956637/): Դրան ի պատասխան՝ ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը վերջինիս այս հարցում անգետ անվանեց (Լևոն Տեր-Պետրոսյան. Փաշինյանն այս հարցում միանգամայն ճիշտ է, իսկ Վիգեն Սարգսյանը՝ բացարձակ անգետ, http://www.ilur.am/news/view/68122.html): Հատկանշական է, որ բանավեճը նախևառաջ ծավալվեց նախկին բարձրաստիճան պաշտոնյաների միջև, որոնց զբաղեցրած պատասխանատու դիրքից պետք է ենթադրել, որ նրանք այն անձինք են, որոնք լավագույնս են տիրապետում հիմնախնդրի էությանը:

վերջինի, Փ.Վեյրը «կոնֆլիկտի կողմ» հասկացությունը սահմանում է լայն իմաստով, ըստ որի՝ կոնֆլիկտի կողմերը «...կոնֆլիկտում ուղղակիորեն կամ անուղղակիորեն ընդգրկված և նրա ելքում նշանակալից շահեր ունեցող և որոշում կայացնող միավորներն են»: Ընդ որում, հեղինակը նշում է, որ կոնֆլիկտի զարգացման ընթացքում երկրորդական կողմերը կարող են դառնալ հիմնական կողմեր և հակառակը[1]: Ի տարբերություն Ջ.Լաուի, որը «կոնֆլիկտի կողմ» ասելով հասկանում է միայն կոնֆլիկտում ուղղակի շահեր ունեցող կողմերին և ի հակադրություն Փ.Վեյրի, որը «կոնֆլիկտի կողմ» ասելով նկատի է առնում կոնֆլիկտի ոչ միայն հիմնական և երկրորդական կողմերին, այլ նաև երրորդ կողմերին, հայ ուսումնասիրողներից Է.Քերոբյանը կարծում է, որ «կոնֆլիկտի կողմ» հասկացությամբ նպատակահարմար է հասկանալ կոնֆլիկտի հիմնական և երկրորդական կողմերը, քանի որ վերջիններս կոնֆլիկտում ուղղակիորեն կամ անուղղակիորեն ընդգրկված են և բնութագրվում են նրա ելքում համապատասխանաբար ուղղակի կամ անուղղակի շահերի առկայությամբ [2, էջ 254]:

Լ.Թութխալյանի «Քաղաքական բառարանում» «հակամարտության կողմ է համարվում այն կողմը, որը մասնակցում է երկու կամ ավելի պետությունների միջև հայտարարված պատերազմին» [3, էջ 108]:

«Կոնֆլիկտի կողմեր» հասկացությունը Ղարաբաղյան կարգավորման գործընթացում. Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում «Կողմեր» հասկացության իրավաքաղաքական կարգավիճակը, թերևս, առաջին անգամ հստակեցվել է 1994թ. փետրվարի 18-ի «Կրակի և ռազմական գործողությունների լիակատար դադարեցման մասին» արձանագրությունում [4], որը հետագայում հիմք է հանդիսացել հրադադարի հաստատման համար: Փաստաթղթի ներածականի առաջին նախադասությունը վերաբերում է հենց այդ հարցի ճշգրտմանը. *«Ադրբեջանի Հանրապետության պաշտպանության նախարարը և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը, Լեռնային Ղարաբաղի զինված կազ-*

[1] Խոսելով կոնֆլիկտի կողմերի մասին՝ հեղինակն առանձնացնում է. (1) հիմնական կողմեր, «...որոնց նպատակները հանդիսանում են կամ նրանց կողմից ընկալվում են որպես անհամատեղելի, և որոնք ուղղակիորեն փոխազդում են՝ հետապնդելով այդ համապատասխան նպատակները», (2) Երկրորդական կողմեր, որոնք «...ունեն անուղղակի շահեր վեճի ելքում, սակայն նրանք չեն համարում իրենց ուղղակիորեն ներգրավված» և (3) շահագրգիռ երրորդ կողմեր, որոնք «...շահագրգռված են կոնֆլիկտի հաջող լուծման մեջ»: *Hocker J., Wilmot W.*, Interpersonal conflict. USA: Brown and Benchmark Publishers, 1995, p. 161 (մեջբերումն ըստ *Է.Քերոբյանի*՝ Կոնֆլիկտի կողմերի և երրորդ կողմերի վերլուծության մեթոդաբանական հիմնահարցերը. տեսություն և իրականություն, Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, № 4, էջ 254, Եր., 2011):

մավորումների լիազոր ներկայացուցչի մասնակցությամբ, այսուհետ՝ Կողմերը»... Եվ արդեն փաստաթղթի առաջին կետում հստակեցվում է նրանց կարգավիճակը. *«Կողմեր» եզրույթի օգտագործումը չի նշանակում որևէ այլ քաղաքական կամ իրավական կարգավիճակի ճանաչում՝ բացի սույն արձանագրության մեջ նշվածից»:* Այսինքն՝ առկա ձևակերպումը վկայում է, որ փաստաթղթում Հայաստանի Հանրապետության անվան օգտագործումը չի նշանակել վերջինիս՝ որպես հակամարտության կողմի իրավական կամ քաղաքական կարգավիճակի արձանագրում: Պաշտոնական Բաքվի՝ Արցախի ներկայացուցիչների հետ բանակցություններ վարելու բարդույթը հաշվի առնելով՝ կարելի է ենթադրել, որ հենց ադրբեջանական կողմի նախաձեռնությամբ է «կողմերի» կարգավիճակը հստակեցվել՝ ԼՂՀ իրավական կարգավիճակի ճանաչումը կանխելու համար[1]:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ հատկանշական են 1994թ. մայիսյան հրադադարի կնքման գործընթացում նշանակալից ավանդ ունեցած, 1992-1996թթ. Ռուսաստանի միջնորդական առաքելության ղեկավար, Լեռնային Ղարաբաղի գծով ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Վ.Կազիմիրովի հիշատակումները [5]: Վերջինիս վկայությամբ՝ Հրադադարի համաձայնագրի առաջին տարբերակը պատրաստել է նույն հիմքով, ինչպես նախկինում՝ Բաքվի և Ստեփանակերտի միջև: «Բայց ադրբեջանցիները, ովքեր մինչ այդ ուղիղ 10 անգամ Ստեփանակերտի հետ ձևակերպել էին ռազմական գործողությունների սահմանափակման մասին փաստաթղթերը՝ առանց Երևանի մասնակցության, հիմա համաձայնում էին ստորագրել համաձայնագիրը միայն Հայաստանի ներկայացուցչի հետ, բայց առանց Լեռնային Ղարաբաղի հայերի:

...Օրվա վերջում Հեյդար Ալիևը ևս մեկ անգամ խնդրեց զանգահարել Երևան և ձեռք բերել Հայաստանի ստորագրությունը: Ես զանգահարեցի, սակայն չէի մտածում, որ այնտեղ կհամաձայնեն ստորագրել: Բայց շուրջ

[1] Չնայած պետք է ասել, որ այդպիսի փաստաթղթեր արդեն կային: Այդպիսիք են՝ 1991թ. սեպտեմբերի 23-ի Ժելեզնովոդսկի հայտարարագիրը, 1992թ. սեպտեմբերի 19-ին ԱՀ-ի, ՀՀ-ի և Լեռնային Ղարաբաղի պաշտպանական գերատեսչությունների ղեկավարների կողմից կնքված Սոչիի համաձայնագիրը, 1992թ. սեպտեմբերի 25-ին Մոսկվայում ստորագրված Սոչիի համաձայնագրի կիրառումն ապահովող ռազմատեխնիկական արձանագրությունը, 1993թ. սեպտեմբերին ԵԱՀԽ Մինսկի խմբի նախագահի առաջարկած Հրատապ քայլերի ժամանակացույցը, 1994թ. փետրվարի 18-ի արձանագրությունը, Բիշքեկյան արձանագրությունը, Հրադադարի համաձայնագիրը, պաշտպանական գերատեսչությունների ղեկավարների հուլիսի 27-ի նամակը և այլն: Ռուսաստանի միջնորդությամբ և Բաքվի ու Ստեփանակերտի միջև ուղղակի կապերի մասին վկայող փաստաթղթերի մեծամասնությունը ներկայացրել է Վ.Կազիմիրովը: Տե՛ս Վ.Կազիմիրովի պաշտոնական կայքը՝ http://vn.kazimirov.ru.

մեկուկես ժամ հետո անսպասելի ստացա Երևանի համաձայնությունը, ինչը համապատասխանում էր հակամարտության կազմաձևման մեր հայեցակարգին: Ես ստիպված էի երկու տպագրված «ստորագրողների» միջև ձեռագիր ավելացնել. «Հայաստանի պաշտպանության նախարար» (դա երևում է նաև փաստաթղթի պատճենի վրա)»[1]: Այսինքն՝ այս վկայությունից ակնհայտ է դառնում նաև, որ պաշտոնական Երևանի կողմից դա կատարվել է առավելապես արյունահեղությունը դադարեցնելու և հակամարտության կարգավորման գործընթացը կառուցողական հուն տեղափոխելու համար: Մյուս կողմից՝ փաստ է նաև, որ ՀՀ-ն, 1994թ. մայիսին ստորագրելով հրադադարի հաստատման համաձայնագիրը, այնուհետև՝ 1995-ի փետրվարին, եռակողմ ձևաչափով ստանձնելով հրադադարի ամրապնդման և միջադեպերի հետաքննության պարտավորվածությունը[2] և մինչ օրս մասնակցելով հիմնախնդրի կարգավորմանն ուղղված բանակցային գործընթացին՝ ինքնըստինքյան դարձել է հակամարտության բանակցային կողմ:

Հասկացությունների դերը «հիմնախնդրի և կոնֆլիկտի» համատեքստում. Բաքվի կառուցողական դիրքորոշման պարագայում, իհարկե, կարելի է ընդհանրապես երկրորդական համարել հակամարտող կողմերի քանակի ու կարգավիճակի հետ կապված հարցերը, քանի որ նպատակը հիմնախնդրի լուծումը պետք է լինի, այլ ոչ թե դերերի ճշգրտումը: Սակայն Ադրբեջանի ապակառուցողական քաղաքականության շնորհիվ հիմնական ուշադրությունը երկար տարիներ կենտրոնացված էր կոնֆլիկտի կարգավորման, ներկայում՝ առավելապես կառավարման վրա, իսկ հիմնախնդրի լուծումը դիտվում է որպես հարակից ու կարգավորումից ածանցյալ[3]: Դա ինչպես տրամաբանական, այնպես էլ մեթոդաբանական սխալ է, որը չի կարող բացասաբար չանդրադառնալ գործընթացների վրա [6, c. 7][4]: Ղարա-

[1] *Կազիմիրով Վ.,* «Չկային կնիքներ, կնքամոմեր, ոչ էլ գեղեցիկ թղթապանակներ» http://www.mediamax.am/printpage.php?lang=am&nid=10194

[2] Հրադադարի ամրապնդման և միջադեպերի հետաքննության պարտավորվածության փաստաթուղթը տե՛ս Վ.Կազիմիրովի անձնական կայքում՝ http://vn.kazimirov.ru/doc12.htm.

[3] Տվյալ պարագայում անհրաժեշտ է հստակորեն տարանջատել երբեմն որպես հոմանիշներ օգտագործվող «հիմնախնդիր» և «կոնֆլիկտ» հասկացությունները: Առաջինին՝ հոմանիշ է հարց կամ խնդիր բառը - https://ru.wikipedia.org/wiki/Проблема, իսկ երկրորդին՝ բախումը - https://ru.wikipedia.org/wiki/Конфликт

[4] Ինչպես հեղինակն է իրավացիորեն նշում՝ 1. հիմնախնդիրը և կոնֆլիկտը փոխկապակցված, բայց հարաբերականորեն անկախ և տարբեր մակարդակի հասկացություններ են, 2. հիմնախնդիրը պարտադրաբար չի ենթադրում կոնֆլիկտ, իսկ կոնֆլիկտը պարտադիր չէ, որ բխի հիմնախնդրից, 3. հիմնախնդրի և կոնֆլիկտի հարաբերական անկախությունը ենթադրում է հիմնախնդրի լուծման և կոնֆլիկտի կարգավորման մեթոդների հարաբերական անկախություն, 4. կոնֆլիկտը ծնվում է ոչ այնքան հիմնախնդիրը կազմող գործոններից, որքան առաջանում է դրանց միջև առկա հարաբերություններից:

բաղի հիմնախնդիրը գոյություն ուներ մինչև 1988թ.: Իրավական նորմերի հիման վրա՝ երկխոսության միջոցով խնդիրը լուծելու փոխարեն միութենական և ադրբեջանական իշխանությունների գործողություններն ուղղված էին հենց ուժային մեթոդների ու ջարդերի միջոցով Լեռնային Ղարաբաղի բնակչության կամքի ճնշմանը, ինչը բերեց կոնֆլիկտային գործոնների ուժեղացմանը և բաց ռազմական դիմակայությանը: Այսինքն՝ Լեռնային Ղարաբաղի հարցը հակամարտության վերածվեց, երբ ի պատասխան արցախահայության խաղաղ, արդարացի պահանջի՝ Ադրբեջանը դիմեց ուժային մեթոդներով հիմնահարցի լուծմանը: Արդյունքում՝ բուն հիմնախնդիրը քողարկվում է առաջին փուլում բացակայող, սակայն նրա՝ կոնֆլիկտի վերաճելու արդյունքում ծագած գործոններով: Ընդ որում, մի կողմից՝ մոռացվում է բուն հիմնախնդիրը, մյուս կողմից՝ այն սկսում է ընկալվել բացասական հետևանքների տեսանկյունից (փախստականներ, տարածքներ, զորքերի տեղակայում և հետքաշում, տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների վերականգնում, հաղորդակցության ուղիների վերականգնում և այլն), թեպետ, այդ հետևանքների պատասխանատվությունը պետք է կրեն կոնֆլիկտի հրահրողները: Իհարկե, այդ հարցերն այսօր բավականաչափ հրատապ են և արագ լուծման կարիք ունեն: Սակայն Ղարաբաղյան հիմնախնդրի էությունը Արցախի ժողովրդի ինքնորոշման՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական կարգավիճակը ինքնուրույն որոշելու իրավունքի հարցն է [6, c. 7]: Դա է պատճառը, որ Բաքուն համառորեն փորձում է անտեսել ղարաբաղյան կողմին ինչպես բանակցային գործընթացում, այնպես էլ միջազգային քաղաքական պրակտիկայում: Մինչդեռ, ակնհայտ է, որ 1994թ. Բուդապեշտյան գագաթաժողովում Լեռնային Ղարաբաղին բանակցային կողմի կարգավիճակի տրամադրումը բխում էր հենց այդ նպատակից[1]: Երբ ադրբեջանական կողմը բուդապեշտյան գագաթաժողովից հետո, որտեղ ամեն ինչ թույլատրվել էր նախագահ Ալիևի կողմից, սկսել է արգելակել բանակցությունները, գործող համանախագահ Լասլո Կովաչը 1995թ. մարտի 31-ին Պրահայում ընթացող ԵԱՀԿ ղեկավարների խորհրդում հստակ թվարկել է Ղարաբաղյան հակամարտության կողմերին՝ երկու պետություն (Ադրբեջանը և Հայաստանը) և Լեռնային Ղարաբաղը[2]:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա վերջինս նույնիսկ ցանկության դեպքում բուն Ղարաբաղի հիմնախնդիրը լուծելու լիազորություն չու-

[1] Այդ մասին տե՛ս Офиц. сайт ОБСЕ, http://www.osce.org/documents/mcs/1994/12/4048_ru.pdf
[2] ОБСЕ, руководящий совет, Прага, 1-SC/Journal No. 2, 31 марта 1995 года.

նի: Նրա մասնակցությունը բանակցային գործընթացին կարող է արդարացված լինել այնքանով, որքանով որ ընդգրկված է կոնֆլիկտում, թեպետ հաճախ Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչները ժխտել են դա, հավանաբար՝ նկատի ունենալով բուն հիմնախնդիրը, այլ ոչ թե կոնֆլիկտը [7, c. 96-105]: Միայն այն փաստը, որ այսօր Հայաստանը շրջափակման մեջ է և միջազգային մոնիթորինգի են ենթարկվում Հայաստանի և Ադրբեջանի սահմանները, անհրաժեշտ է դարձնում նրա մասնակցությունը կարգավորման գործընթացին: Այլ բան է, որ հարցերի հիմնական խումբը Հայաստանի իրավասությունից դուրս է [8, էջ 46]: Այդ է վկայում ոչ միայն պաշտոնական Երևանի ընտրած մոտեցումը (Երևանը երբեք չի ստորագրի որևէ փաստաթուղթ, որի տակ չի լինի նաև Ստեփանակերտի ստորագրությունը), այլև կարգավորման տարբերակներն Արցախին ներկայացնելու տարիների փորձը (օրինակ՝ փուլային, փաթեթային և ընդհանուր պետություն անվանումը ստացած տարբերակները):

Ինչպես է պաշտոնական Ստեփանակերտը դուրս մնացել ուղղակի բանակցություններից[1]**.** Ղարաբաղյան հակամարտության կարգավորման եռակողմ բանակցային ձևաչափից պաշտոնական Ստեփանակերտի ուղղակի դուրս մնալը հակասական ու դեռևս լիարժեք չբացահայտված հարցերից մեկն է: Հայ իրականության մեջ այս ուղղությամբ միակարծություն չկա: Ոմանք գտնում են, որ դրա պատճառ է հանդիսացել ԼՂՀ առաջին նախագահ Ռ.Քոչարյանի ՀՀ նախագահ ընտրվելը, որը, ստանձնելով այդ պաշտոնը, միաժամանակ հանդես է եկել նրա շահերի անմիջական պաշտպանի դիրքերից[2]: Նմանօրինակ դիրքորոշում են հայտնել նաև ԵԱՀԿ

[1] Պաշտոնական Ստեփանակերտը բանակցային գործընթացից լիովին մեկուսացված չէ, ինչի մասին վկայում են ԼՂՀ իշխանությունների հետ միջնորդների պարբերական հանդիպումներն ու կարգավորման գործընթացի մասին նրանց տեղեկացնելը: Խոսքն առավելապես Բաքվի և Ստեփանակերտի միջև պաշտոնական՝ ուղղակի բանակցությունների բացակայության կամ ձևախեղված բանակցությունների մասին է, երբ հակամարտության հիմնական կողմը չի մասնակցում սեփական ճակատագրի կարգավորմանն ուղղված տարբեր ձևաչափերով ընթացող բանակցային գործընթացին:

[2] «Նախկինում ներկայացվում էր, որ Ռոբերտ Քոչարյանը ղարաբաղցի է, դրա համար էլ բանակցություններում պետք է ինքը ներկայացնի Ղարաբաղը: Բայց Ռոբերտ Քոչարյանը Ղարաբաղի ժողովուրդը չէր, ժողովուրդը պետք է ներկայացված լինի բանակցություններում: Եթե Ղարաբաղը չի մասնակցում իր ինքնորոշման խնդրին, ապա անհասկանալի է՝ ինչպե՞ս պետք է այդ հարցը լուծվի: Եվ մենք ամեն գնով աշխատելու ենք Ղարաբաղը վերադարձնել բանակցությունների սեղան: Կարծում եմ՝ դրանից հետո Ադրբեջանի հետ կարելի է լուծումներ գտնել»,- 2010թ. մարտի 22-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է ՀՀԿ փոխնախագահ, Ազգային ժողովի պատգամավոր Ռազմիկ Զոհրաբյանը՝ նշելով, որ պետք է ուղղել նախկին սխալները, http://armarlur.com/ռազմիկ-զոհրաբյանը-քննադատել-է-ռ-քոչար/

ՄԽ ամերիկացի [9, էջ 58][1] և ֆրանսիացի [10, էջ 49][2] համանախագահները:

Ժամանակին այս խնդրին անդրադարձել է նաև նախագահ Ռ.Քոչարյանը: Նախկին իշխանությունների որդեգրած «Երևանը երբեք չի ստորագրի որևէ փաստաթուղթ, որի տակ չի լինի նաև Ստեփանակերտի ստորագրությունը» մոտեցումն, ըստ վերջինի, ինչ-որ ժամանակ արդյունավետ էր, բայց եկավ պահ, երբ այն դարձավ անարդյունավետ: «Տպավորություն էր ստեղծվել, որ Հայաստանը պատրաստ է կարգավորման ցանկացած ձևի, բայց խնդիրը Ղարաբաղն է, ավելի ճիշտ՝ Ղարաբաղի ղեկավարությունը: Հարց էր առաջանում. մի՞թե Հայաստանն ի վիճակի չէ իրենից Ղարաբաղի ակնհայտ կախվածության պայմաններում ճնշում գործադրել և ստիպել համաձայնել այս կամ այն դիրքորոշման հետ: Ես առաջարկել եմ փոխել այդ տեսակետը և փորձել Հայաստանի ռեսուրսն օգտագործել հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ սեփական դիրքորոշումը և մոտեցումները մշակելու համար: Այսինքն՝ ոչ թե «մենք համաձայն ենք կարգավորման ցանկացած ձևի, որին կհամաձայնի Ղարաբաղը», այլ մենք ունենք սեփական դիրքորոշում և պատրաստ ենք այն պնդել: Իմ ընտրվելուց հետո ես այդպես էլ արեցի» [11]:

Ռ.Քոչարյանն այս դիրքորոշումը հետևյալ կերպ է հիմնավորել. «Բոլորը գիտեն հակամարտության էությունը և հասկանում են, որ Ադրբեջանի մերժումը՝ բանակցելու Ղարաբաղի հետ, ավելի շատ գալիս է հոգեբանական բարդույթից: Միաժամանակ, Բաքու-Երևան ուղիղ բանակցություններն ունեն երեք հիմնական առավելություն: Առաջին և կարևորը. Հայաստանը շատ ավելի մեծ արդյունավետությամբ կարող է պաշտպանել հայկական կողմի շահերը: Բանակցությունների ժամանակ կողմերի կարգավիճակը չափազանց կարևոր է, չճանաչված պետության շահերն անտեսե-

[1] Մասնավորապես, այս առթիվ ԵԱՀԿ ՄԽ ամերիկացի նախկին համանախագահ Մ.Բրայզան լրագրողի՝ «Դուք անընդհատ խոսում եք այն մասին, որ հակամարտության վերջնական լուծման համար Ղարաբաղը պետք է միանա բանակցություններին: Ձեր կարծիքով… համանախագահները չէ՞ որ մեղավոր են այն հարցում, որ Ղարաբաղը դուրս է մնացել բանակցություններից Հայաստանի պատճառով» հարցին պատասխանել է. «Ոչ մեկն էլ մեղավոր չէ: Ուղղակի մի քանի տարի առաջ հայկական կողմը որոշում է կայացրել, որպեսզի ինքը ներկայացնի Ղարաբաղի շահերը: Եվ որպեսզի այդ իրավիճակը փոխվի, պետք է ստանալ երկու կողմերի համաձայնությունը, բոլոր կողմերի համաձայնությունը: Անկասկած, ղարաբաղյան կողմը պետք է ներգրավվի գործընթացին»:

[2] Ֆրանսիացի համանախագահ Բերնար Ֆասյեն 2009թ. Ստեփանակերտ այցելության ընթացքում մեկ անգամ ևս հիշեցրել է. «Ղարաբաղի մասնակցությունը բանակցություններին կախված չէ համանախագահներից, քանի որ Ղարաբաղի ներկայացուցիչների մասնակցությունը ժամանակին դադարեցվել է հայկական կողմի որոշմամբ, և այժմ Ղարաբաղի մասնակցությունը կախված է նաև ադրբեջանական կողմից:

լը՝ շատ ավելի հեշտ: Երկրորդ. ես որպես բանակցությունների ակտիվ կողմ շատ ավելի մեծ հնարավորություն եմ ստանում հանդիպումների ժամանակ ներկայացնել Ղարաբաղյան հարցը, որպես սուբյեկտ, ով ուղղակի և անմիջական պատասխանատվություն ու բեռ է կրում բանակցությունների համար, նույնը՝ Հայաստանի արտգործնախարարը: Հայաստանի նախագահի և արտգործնախարարի շփումների մակարդակը դժվար է համեմատել ԼՂՀ նախագահի ու արտգործնախարարի շփումների մակարդակի ու հաճախակիության հետ: Երրորդ առավելությունը. Հայաստանի նախագահի ներգրավվածությունը շատ ավելի բարձր մակարդակի վրա է բարձրացնում Հայաստանի պատասխանատվությունը ԼՂՀ-ի նկատմամբ, քանի որ մենք ամբողջ Հայաստանի ներուժը՝ և՛ դիվանագիտական, և՛ տնտեսական, և՛ պաշտպանական, ծառայեցնում ենք այս հարցի կարգավորմանը» [12]: Նախկին արտգործնախարար Վ.Օսկանյանի կարծիքով՝ բանակցային գործընթացում ԼՂ չներկայացվածության միակ պատճառն Ադրբեջանի մերժողական կեցվածքն է: «Այսօր Հայաստանը հետևյալ երկընտրանքի առջև է կանգնել. պնդել Լեռնային Ղարաբաղի մասնակցությունը և չգնալ բանակցությունների՞, թե՞ համաձայնել բանակցություններին՝ հանուն այն բանի, որ դրանք չընդհատվեն: Հայաստանի նախագահը որոշել է երկրորդը՝ հարցին մոտենալով հետևյալ կերպ. իսկապես կարևոր չէ, թե հայերի կողմից ով է բանակցում, այլ՝ թե ինչ ենք բանակցում: Հայաստանը տանում է բանակցությունները, բայց ինչ-որ պահի անխուսափելի է դառնալու Լեռնային Ղարաբաղի ներկայությունը գործընթացում» [13]:

Հ.Ալիևը 1999թ. Բաքվում հայ լրագրողների հետ հանդիպման ընթացքում պարզաբանել է, թե ինչու է Ադրբեջանը խուսափում Լեռնային Ղարաբաղի հետ ուղղակի շփումներից: Նախ, նա ընդունել է, որ Լեռնային Ղարաբաղը դե ֆակտո արդեն Հայաստանի կազմում է. «Ասածիս վկայություններըը շատ են: Հայաստանի ներկայիս նախագահը Լեռնային Ղարաբաղի նախկին ղեկավարն է: Հայաստանի մի քանի նախարարներ դարձյալ Ղարաբաղից են: Այստեղ արդեն ամեն ինչ ասված է: Եվ այդքանից հետո դուք ասում եք, որ պետք է ուղիղ շփման մեջ մտնել: Լեռնային Ղարաբաղն ինքնուրույն միավոր չէ: Եթե Հայաստանը չմասնակցեր այս գործընթացին, և եթե նա դե ֆակտո չմիացներ Ղարաբաղը, իհարկե, այլ ելք չէր մնա, քան Ղարաբաղի հետ ուղիղ շփումները: Առաջին իսկ օրից հակամարտությունը ոչ միայն Ղարաբաղի ու Ադրբեջանի միջև էր, այլև Հայաստանի ու Ադրբեջանի: Իհարկե, եթե Հայաստանը մի կողմ քաշվի և չմիջամտի Ղարաբաղի գործերին, մեզ այլ ճանապարհ չի մնա, քան Ղարաբաղի հետ հարցի

քննարկումը: Բայց քանի որ մեզ համար գլխավոր սուբյեկտը Հայաստանն է, մենք ուզում ենք պայմանավորվել Հայաստանի հետ» [14]:

Պաշտոնական Ստեփանակերտը բանակցային գործընթացից դուրս բերելու՝ Ռ.Քոչարյանին ուղղված մեղադրանքներին վերջ տալու նպատակով 2010թ. մարտի 29-ին պաշտոնապես հանդես է եկել պաշտոնաթող նախագահի գրասենյակի ղեկավար Վիկտոր Սողոմոնյանը: Նա մասնավորապես նշել է. «ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցությամբ բանակցային գործընթացը դադարել է գոյություն ունենալ Ռոբերտ Քոչարյանի նախագահ ընտրվելուց դեռ մեկ տարի առաջ: Իսկ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումներն ու բանակցությունները պարբերաբար կազմակերպվում էին սկսած 1990 թվականից՝ Մինսկի գործընթացին զուգահեռ: Լևոն Տեր-Պետրոսյանը բանակցել է և՛ Այազ Մութալիբովի, և՛ Աբուլֆազ Էլչիբեյի, և՛ Հեյդար Ալիևի հետ: Ավելին, միևնույն ժամանակ հաճախակի հանդիպումներ էին կազմակերպվում երկու նախագահների ներկայացուցիչների՝ Ժ.Լիպարիտյանի և Վ.Գուլուզադեի միջև (1995-96թթ. տեղի է ունեցել 11 այդպիսի հանդիպում): Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև բանակցությունները շարունակվել են նաև Ռոբերտ Քոչարյանի ընտրվելուց հետո, խնդրո առարկայի հարցի համատեքստում, այն կարևոր տարբերությամբ, որ ՀՀ նոր նախագահի պահանջով ԵԱՀԽ ՄԽ նախագահները պարտադիր կերպով (չհաշված եզակի բացառությունները) այցելում էին ԼՂՀ և բանակցում պաշտոնական Ստեփանակերտի ներկայացուցիչների հետ…»[1]:

Բանակցային ձևաչափի խեղաթյուրումը՝ հիմնախնդրի կարգավորումն արգելակող գործոն. Բացի վերոնշյալից, մեր կարծիքով, պաշտոնական Ստեփանակերտի ուղղակի բանակցություններից դուրս մնալը նաև հետևանք էր այն իրողության, որի արդյունքում 1996թ. դեկտեմբերի 3-ին Լիսաբոնի գագաթաժողովում ընդունվեց գործող նախագահի հակահայկական հայտարարությունը, որի հետ, բացի Հայաստանից, համաձայն էին մասնակից բոլոր պետությունները: Հասկանալի է, որ մեր դիվանագիտական անհաջողության և միջազգային հանրության կողմից Ադրբեջանի նկատմամբ ցուցաբերվող աջակցության պայմաններում վերջինս ավելի կկոշտացներ իր դիրքորոշումը, ինչն էլ տեղի ունեցավ Լիսաբոնին հաջորդած ամիսների ընթացքում: Հայկական կողմերի դիվանագիտական թերացումների հետևանքով ԼՂՀ-ն բանակցությունների սուբյեկտից դարձավ

[1] https://news.am/arm/news/17772.html

բանակցությունների օբյեկտ, ինչը նշանակում է, որ «Ղարաբաղյան գործոնը» ԱՀ-ի կողմից նվազագույնի հասցվեց: Բնականաբար, դա Ադրբեջանի կարևորագույն հաջողություններից մեկն է, որով հերթական անգամ փորձում է աշխարհին ցույց տալ, որ հակամարտությունը ՀՀ-ի և ԱՀ-ի միջև ինչ-որ տարածքի՝ Լեռնային Ղարաբաղի համար է, որը զավթվել է Հայաստանի ագրեսիայի արդյունքում: Հիմնախնդրի կերպարը խեղաթյուրելով՝ պաշտոնական Բաքուն ոչ միայն խոչընդոտում է հակամարտության խաղաղ կարգավորմանը, այլև միջազգային ասպարեզում հող նախապատրաստում ռազմական ճանապարհով խնդիրը լուծելուն ուղղված իր քայլերն օրինականացնելու համար: Դրա շոշափելի պտուղները երևացին դեռևս 2016-ի առճակատման օրերին, երբ տարբեր երկրներ իրենց անհասցե հայտարարություններով «ըմբռնելի» վերաբերմունք դրսևորեցին Արցախի դեմ ռազմական գործողություններ սանձազերծած Ադրբեջանի նկատմամբ:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Վերջին շրջանում Ղարաբաղյան հակամարտության շուրջ տեղի ունեցող իրադարձություններն ու վտանգավոր զարգացումներն արդյունք են նաև այն բանի, որ 1988-ի շարժմանը հաջորդած 30 տարիներին մենք չմշակեցինք և չունենք միասնական մոտեցում ազգային անվտանգության գերկարևոր հարցում: Հայկական կողմերի թույլ տված սխալները պաշտոնական Բաքվին հնարավորություն են ընձեռել խոչընդոտել հակամարտության կարգավորման խաղաղ գործընթացին:
2. Հակամարտության կարգավորման գործընթացում «Կողմեր» եզրույթի օգտագործումը, ըստ 1994թ. փետրվարի 18-ի կողմերի միջև ստորագրված արձանագրության առաջին կետի, որով հստակեցվել են նրանց հարաբերությունները, չի նշանակել կողմերի որևէ այլ քաղաքական կամ իրավական կարգավիճակի ճանաչում՝ բացի սույն արձանագրությունում նշվածից: Այսինքն՝ խնդրի իրավական հիմքերի տեսանկյունից հաստատված չէ ՀՀ-ի՝ Ղարաբաղյան հակամարտության կողմ լինելու հանգամանքը:
3. Թյուրըմբռնումներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է պարզաբանել «հիմնախնդիր» և «կոնֆլիկտ» հասկացությունները, որի պարագայում ակնհայտ է դառնում, որ Հայաստանը փաստացիորեն ընդգրկված է կոնֆլիկտում, բայց նույնիսկ ցանկության դեպքում հիմնախնդրի առանցքային հարցերը դուրս են կարգավորման նրա իրավասությունից:

4. Ցանկացած բնագավառում հաջողության հասնելու նախապայմանը իմացությունն է: Այս առումով բնութագրական է Սուն Ցզիի բնորոշումը. «Եթե ճանաչում ես թշնամուդ և ճանաչում ես ինքդ քեզ, հարյուրավոր մարտերում քեզ վտանգ չի սպառնում, եթե ճանաչում ես ինքդ քեզ, բայց չես ճանաչում թշնամուդ, ապա մեկ ճակատամարտ կհաղթես, իսկ մյուսում կպարտվես, եթե չես ճանաչում ոչ թշնամուդ, ոչ էլ ինքդ քեզ, դու վտանգի մեջ ես յուրաքանչյուր ճակատամարտում» [15, c. 17]: Գիտակցելով այս հանգամանքը՝ անհրաժեշտ է հստակ քայլեր ձեռնարկել Ղարաբաղյան հակամարտության իրավական, քաղաքական և այլ ասպեկտներին տիրապետող մասնագետների պատրաստման համար:

Հուլիս, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Laue J.,* The emergence and institutionalization of third party roles in conflict" // Sandole D., Sandole-Staroste I., "Conflict management and problem solving: interpersonal to international applications", New York: New York University Press, 1987, p. 17-18 (մեջբերումն ըստ *Է.Քերոբյանի*՝ Կոնֆլիկտի կողմերի և երրորդ կողմերի վերլուծության մեթոդաբանական հիմնահարցերը. տեսություն և իրականություն, Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, № 4. Եր. 2011):
2. *Քերոբյան Է.,* Կոնֆլիկտի կողմերի և երրորդ կողմերի վերլուծության մեթոդաբանական հիմնահարցերը. տեսություն և իրականություն, Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, № 4. Եր., 2011:
3. *Թութիալյան Լ.,* Քաղաքական բառարան, Երևան, 2006:
4. Архив МИД НКР, папка N 16, документ 2.
5. *Казимиров В.,* Мир Карабаху. Посредничесто России в урегулировании нагорно-карабахского конфликта, М., 2009.
6. *Золян С.,* Нагорный Карабах: проблема и конфликт, Ер., 2001.
7. Золян С., Проблема и конфликт (опыт логико-семантического анализа), "Полис", 1996, N 4.
8. Քաղաքականություն և քաղաքագիտություն. հարցեր և պատասխաններ, Պրակ Ե, Եր. 2008:
9. «Անալիտիկոն», հանդես՝ մտածող և ոչ անտարբեր մարդկանց համար, N 8, օգոստոս, Ստեփանակերտ, 2009:
10. «Անալիտիկոն», հանդես՝ մտածող և ոչ անտարբեր մարդկանց համար, N 12, դեկտեմբեր, Ստեփանակերտ, 2009:
11. Ռ.Քոչարյանի պատասխանները «Գոլոս Արմենիի»-ի ընթերցողների հարցերին, 3 ապրիլ, 2004թ.:

12. Ռ.Քոչարյանի հարցազրույցը Հ1, Հ2 և ԱՀ հեռուստաընկերություններին, 2 մարտի, 2006թ.:
13. ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի ասուլիսի գրառումներից, դեկտեմբերի 22, 2004թ.:
14. Հ.Ալիևի հարցազրույցը հայ լրագրողների հետ, «Երկիր», 6 հուլիսի 1999թ.:
15. Сунь-цзы, Искусство войны: Центрполиграф; М.; 2011.

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Հրայր Փաշայան, Լիանա Բալայան

Ամփոփագիր

Ղարաբաղյան հակամարտության շուրջ ընթացող արդի զարգացումների համատեքստում հոդվածում քննարկվում են «հակամարտության կողմեր» հասկացության իրավաքաղաքական կարգավիճակի, հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացից պաշտոնական Ստեփանակերտի դուրս մնալու և հիմնախնդրի կարգավորմանը խոչընդոտող հարցերը:

Ցույց է տրվում, որ բացի Ադրբեջանի ապակառուցողական դիրքորոշումից, հակամարտության կարգավորման խոչընդոտները վերացնելու նախապայմաններից մեկն էլ հիմնախնդրի տարբեր ասպեկտներին տիրապետող մասնագետների պատրաստումն ու նրա իրական կերպարը միջազգային հանրությանը ներկայացնելն է:

ПРЕПЯТСТВИЯ УРЕГУЛИРОВАНИЮ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

Грайр Пашаян, Лиана Балаян

Резюме

В статье обсуждается политико-правовой статус понятия «стороны конфликта», выбывание официального Степанакерта из переговорного процесса по урегулированию проблемы и вопросы, препятствующие урегулированию проблемы, в контексте современных развитий, происходящих по вопросу карабахского противостояния.

Показывается, что, кроме деструктивной позиции Азербайджана, одним из предусловий устранения препятствий, мешающих урегулированию противостояния, является подготовка профессионалов, владеющих разными аспектами проблемы, и представление ее реального образа международному сообществу.

OBSTACLES TO THE SETTLEMENT OF KARABAKH CONFLICT

Hrayr Pashayan, Liana Balayan

Resume

The article discusses the political and legal status of the concept of "parties of the conflict", the retirement of the official Stepanakert from the negotiation process on the settlement of the problem and the issues that impede the settlement of the conflict in the context of the current developments around the Karabakh confrontation.

It is demonstrated that in addition to the destructive position of Azerbaijan, one of the preconditions for eliminating obstacles that hamper the settlement of the conflict is training of the professionals to deal with the different aspects of the problem and the presentation of its real view to the international community.